

## ՀՐԱԶՅԱ ԱՍՄԱՐՅԱՆ

### ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԱՐՏԱՅՈՒՈՒՄԸ «ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ» ԼՐԱԳՐՈՒՄ (19-րդ դարի 40-70-ական թթ.)

Իտալական ազգային-ազատագրական շարժումները, որոնք տեղի են ունեցել 18-րդ դարի 80-ականներից մինչև 19-րդ դարի 70-ական թվականները, ուղղված էին ավստրիական, ինչպես նաև երկրի հարավում գործող Բուրբոնների բռնակալական իշխանության դեմ: Իտալական ժողովուրդը պայքարի գնով եւ արյուն հեղելով ազատագրվեց այդ ծանր լծից՝ հասնելով երկրի անկախությանն ու պետականության ստեղծմանը:

Այդ ժամանակաշրջանը Իտալիայի պատմության մեջ ստացավ Ռիսորջի-մենտո (Վերածնություն) անվանումը:

«Արշալոյս Արարատեան» լրագիրը տպագրվում էր Զմյուռնիայում (1840–1878), որի հիմնադիր խմբագիրն էր Ղուկաս Պալղազարյանը: Վերջինիս մահվանից հետո պարբերականը շարունակվեց տպագրվել նաև ուշ շրջանում 1883–1884 թթ.: Լրագրի վերջին խմբագրին էր Հ. Կ. Սըվաճյանը:

Ղուկաս Պալղազարյանը (1810–1878) ազգային-պահպանողական ուղղության գործիչ էր: Նա իր հրատարակած շաբաթաթերթի էջերում մեծ տեղ է տվել Զմյուռնիայի, Հնդկաստանի, Եգիպտոսի, Ռուսաստանի ու այլ գաղթավայրերի հայոց ազգային կյանքին, առեւտրին, ազգապահպանության հարցերին, լուսավորական գործերին:

Հայ պատմագրության մեջ Ղուկաս Պալղազարյան հրատարակիչ-խմբագրի մասին շատ քիչ է գրվել, կամ էլ լավագույն դեպքում նրան համարել են հետադեմ գործիչ: Այնինչ լրագրում իր հրատարակած նյութերի տպագրությունը այլ բան է ապացուցում:

«Արշալոյս Արարատեան» պարբերականը այլ եւ այլ հարցերի քննարկումից բացի անդրադարձել է իտալական ազգային-ազատագրական շարժումների բոլոր հիմնախնդիրներին: Նա այդ շարժումների մասին նյութերը ներկայացնում էր մեծ մասամբ լրագրի «Քաղաքական տեսություն» բաժնում: Սակայն լրագրում իտալական շարժումների վերաբերյալ նյութերը քաղվածաբար բերվում էր եվրոպական՝ ֆրանսիական, անգլիական, ավստրիական, իտալական, երբեմն էլ ռուսական մամուլից: Խմբագիրը շատ էր վստահում եվրոպացիներին եւ դրա համար էլ պարբերականի նյութերը տպագրվում էին նույնու-

թյամբ եւ միակողմանի բնույթ ունեին: Նա քիչ էր միջամտում գործին: Լրագրում զգացվում էր ինքնուրույն գրված նյութերի ու վերլուծությունների պակասը: Մյուս կողմից էլ դա բացատրվում էր այն բանով, որ Ղուկաս Պալղազարյանը, լրագիրը հրատարակում էր Զմյուռնիայում (Թուրքիա), գրաքննությունը ազատ գաղափարներ էր հետապնդում, նյութերի վրա քննություն էր իրականացվում: Այդ ժամանակաշրջանի Օսմանյան կայսրությունում չէր կարելի գրել հայ ազգային-ազատագրական շարժումների մասին, այլ ներկայացնելով իտալական ազգային-ազատագրական շարժումները՝ խմբագիրը զուգահեռներ էր անցկացնում դրանց հետ, ինչով ոգեւորում էր գաղութահայ ժողովրդին: Երբեմն էլ միջնորդում էր որոշ նյութերի տպագրությանը:

«Արշալոյս Արարատեան» լրագիրը անդրադարձել է Զուգեպպե Մաձձինիի, Զուգեպպե Գարիբալդիի, երկրի այդ ժամանակվա վարչապետ կոմս Կավուրի եւ Իտալիայի միավորման շրջանի թագավոր Վիկտոր-Էմանուելի երկրորդի քաղաքական գործունեությունը: Սակայն ելնելով իր հայեցակարգից, երբեմն իտալական ազատագրական շարժումները բացատրում էր զգուշավորությամբ սահմաններում:

Ներկայացվող նյութերը ընթերցողին պատկերացում էին տալիս իտալական ազգային-ազատագրական շարժման բուռն թափի ու ընթացքի, ինչպես եւ զարգացման մասին:

Պրոֆեսոր Ալբերտ Խառատյանը նկատել է, որ «Արեւմտահայերի ազատագրության հարցում «Արշալոյս Արարատեանը» Ղ. Պալղազարյանի ժամանակ (1840–1878) հետեւողական սկզբունքներ չի ունեցել»<sup>1</sup>: Սակայն պետք է ասել, որ իտալական ազգային-ազատագրական շարժումների հարցում Ղուկաս Պալղազարյանի «Արշալոյս Արարատեանը» միանշանակ դրական վերաբերմունք է ունեցել:

«Արշալոյս Արարատեանը» դատապարտում է իտալական հեղափոխական Ֆելիչե Օրսինիի (1858 թ.) դավադրական գործունեությունն ուղղված Ֆրանսիայի կայսր Նապոլեոն III-ի դեմ: Լրագիրը ներկայացնում է այն պահը, երբ Նապոլեոն III-ը եւ Մաթիլդա կայսրուհին ժամանում են Փարիզի օպերայի թատրոն ու մուտքի մոտ, «ատրճանակի իրեք հարված լավեցավ», սակայն բարեբախտաբար նրանք չվնասվեցին: Այդ գործը կազմակերպել էին իտալացի վտարանդի Ֆ. Օրսինին եւ նրա համախոհներ Պիերին, Անտոնիո Գոմեզը ու Տա Սիլվան<sup>2</sup>: Լրագիրն անմիջապես նկատում է, որ Վերին Նախախնամությունը օգնեց պաշտպանելու Ֆրանսիայի անդորրությունն ու բարօրությունը, որով

<sup>1</sup> Ա. Ա. Խառատյան, Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում, Երեւան, 1995, էջ 247:

<sup>2</sup> «Արշալոյս Արարատեան», Զմյուռնիա, 1858, թիվ 563:

պաշտպանվելու էր դավադիրներից նաև ամբողջ Եվրոպան: Լրագիրը ցավով նկատում է նաև, որ «եթե ամենակարողն Աստուած չպահպաներ Նաբոլեոն կայսեր մեծագին կյանքը» այդ դեպքում կտուժեին բոլորը:

Գրեթե նույն շրջանում «Հյուսիսսափայլ» ամսագիրը (1858 թ. Կ<sup>տ</sup> 4-ում) արձագանքում է Ֆելիչե Օրսինիի եւ նրա գործընկերների կողմից Նապոլեոն III-ի վրա կատարված մահափորձին՝ «Ներկա ժամանակի տարեգրությունը» նյութում (ռուսերենից թարգմանությունը Ստ. Նազարյանի): «Հյուսիսսափայլը» մանրամասնում է դատավարության ամբողջ ընթացքը: Ստ. Նազարյանը այս առիթով անդրադառնում է Իտալիայի տարաբախտ վիճակին: Այնպես որ, եթե «Արշալոյս Արարատեանը» խստորեն դատապարտում է իտալացի հայրենասերների արարքը, ապա «Հյուսիսսափայլը» դատապարտելով տեղորի սխալ մեթոդը, բացեալայնպես նարդարացնում է իտալացի հայրենասերների գործողությունները, որոնք ժողովրդին իրենց նպաստ են բերում:

Ջուզեպպե Մաձձինիի նկատմամբ «Արշալոյս Արարատեանի» կարծիքն ընդհանրապես զգուշավոր է: Ընդունելով, որ «Մացինի հռչակավոր իտալացին է», բացեալայնպես նա լրագրի համակրանքը չի կրում այն բանի համար, որ հանդես է եկել Ֆրանսիայի Նապոլեոն կայսրի դեմ: Դրա համար էլ Փարիզի դատարանը հանցավոր է ճանաչել նրան, այնուհետև զրկվել է պաշտոնապես Ֆրանսիա մտնել<sup>3</sup>: Լրագիրը Ջ. Մաձձինիի մասին շարունակում է զարգացնել այն միտքը, որ Անգլիայում բացահայտվել է նաև «պաշտոններից անդամներից մեկը՝ Ստենֆիլդը, մտերիմ հարաբերություններ ունենալով Մաձձինիի հետ, դարձել է Անգլիայի սահմաններում «անոր թղթակիցը, գործակիցը եւ սեղանավորը», դավաճանելով իր հայրենիքի շահին<sup>4</sup>:

Լրագիրն անդրադառնում է իտալական ազգային հերոսի «հարավային Իտալիոյ ազատության առաջնորդի»՝ Ջուզեպպե Գարիբալդիի գործունեությանը: Նախ նա «դյուցազնաբար կաշխատի ձեռք բերել» Սիցիլիայի ազատագրումը եւ հետո այդ կապակցությամբ Դուկաս Պալդազարյանը տպագրում է մի փոքր հաղորդում նվիրված Կապրերա կղզուն, ուր նա «քաջագործական հաղթանակներից» հետո առանձնանում է «ապառաժոտ» Կապրերայում: Այդ կղզին իտալական ազգային հերոսի բնակարանն ու հանգստավայրն էր: Տալիս է տարածքի նկարագիրը, թե ի՞նչ աշխարհագրական աստիճանի վրա է գտնվում եւ որտեղի՞ց է առաջացել այդ անունը<sup>5</sup>: Կապրերան գտնվում է Բոնիֆաչիո նեղուցի արեւելյան մասում, - բացատրում է լրագիրը, - եւ դեմ առ դեմ է Կորսիկա կղզու հարավային կողմին: «Երկարությունը 8-9 հազար մետր է, ունի

<sup>3</sup> Նույն տեղում, 1864, թիվ 725:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Նույն տեղում, 1860, թիվ 637:

առատ ցորեն եւ այծ»<sup>6</sup>:

Նկատում է նաեւ, որ Զուգեպպե Գարիբալդիի եւ Վիկտոր-Էմմանուէլի հարաբերութիւններում «ցրտութիւն» է նկատվել, որի համար ազգային հերոսը գնացել է Կարբերա: Եզրափակելով նյութը մեծարանքի խոսքեր է ուղղում նրանց հասցեին. «Կարիպալտի եւ Վիքթոր-Էմմանուէլը երկու աստղեր են Իտալիոյ»<sup>7</sup>:

Թերթը Զուգեպպե Գարիբալդիի մասին գրում է այն ժամանակ, երբ նա իր կամավորներով ազատագրում էր Նեապոլը եւ Սիցիլիան: Լրագիրն ուրախութեամբ նկատում էր, որ «Սիկիլիայի ապստամբութիւնը կատարյալ հաջողութեամբ պսակվելու վրա է: Կարիպալտի քաջ զորապետը զանազան հաղթութիւններ է ետեւ, Բալերմոյին ալ տիրեց, որ Սիկիլիայի մայրաքաղաքն է ու 170 հազարի շափ բնակիչ ունի»<sup>8</sup>: Այս հոգւածի տպագրումը ուսուցողական նշանակութիւն ուներ: Մի ուրիշ դեպքում էլ ներկայացնելով Սիցիլիայի ապստամբութեան հաղթանակը այդ մասին գրում է. «Այս հայրենասեր տիրապետորը»՝ Գարիբալդին, որ ղեկավարն էր Սիցիլիայի ապստամբութեան, «Այս օրվան օրս փառավոր հաղթական պսակուցեաժ է, որ օր ըստ օրե կը զորանա, կը կարգադրուի եւ խիստ հավանականաբար Նաբոլիի մեջ եւս պիտի մտնա: «Մեծահամբավ Կարիպալտի քաջ եւ իմաստուն զորապետը՝ «դշուցազնաբար կաշխատի ձեռք բերել Սիկիլիայի ազատագրումը»<sup>9</sup>:

Լրագիրը ցուցաբերում է իր դրական վերաբերմունքն այս հարցի կապակցութեամբ: «Եվրոպայի ազատասեր կառավարութիւնները եւ ազատասեր ժողովուրդները ամենքն ալ մեծ համակրութիւն կը ցուցանեն այս հաջողութեանը: Չայն բազմաց. ձայն Աստուծոյ, - ուստի տարակույս չունիմք,՝ գրում է Ղուկաս Պալդազարյանը, - թե Իտալիան յուր կատարյալ ազատութիւնը եւ անկախութիւնը պիտի ստանա, եթե խոհեմութիւնը միշտ առաջնորդ ըլլա Կարիպալտին հաջողութեանցը»<sup>10</sup>:

Զուգեպպե Գարիբալդիին ներկայացնում է իր բոլոր դրական հատկանիշներով եւ նրա մասին հայտնում է, որ «Կերեւի թէ Աստուծո մատը իտալական գործոց վրա է»<sup>11</sup>: Գրում է նաեւ, որ Սիցիլիայից Կալաբրիա ուղեւորվելիս նրա 10.000-անոց կամավորները գնալով շատանում են, իսկ «այս մեծ զորապետը հաղթութիւնն է՛ր առաջանալով»<sup>12</sup> հասել է Նապոլիի մայրաքա-

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Նույն տեղում, 1860, թիվ 625:

<sup>9</sup> Նույն տեղում, թիվ 627:

<sup>10</sup> Նույն տեղում, թիվ 631:

<sup>11</sup> Նույն տեղում:

<sup>12</sup> Նույն տեղում:

դաքը, որը շուտով նա գրավելու է:

Լրագիրն ավելի հանգամանորեն է ներկայացնում (իր երկու համարներում) Ջուզեպպե Գարիբալդիի 1864 թ. Լոնդոն այցելությունը: Նա այնտեղ էր գնացել օգնություն ստանալու իր կամավորների համար: Նրան ընդունել է Այուսթրիենդի դուքսը եւ «փառաւոր հացկերոյթ» տվել հռչակաւոր զորապետի պատվին: Անգլիական հասարակությունն էլ Լոնդոնի մեջ ստորագրություններ է հավաքել «Կարիպալտին մեծ ազարակ կամ երկիր մը նվիրելու համար, որուն արժեքը 50 հազար լիրա սթերլինգի չափ պիտի ըլլա»<sup>13</sup>: Անգլիական հասարակությունն էլ իր հերթին ջերմորեն ընդունեց իտալացի հերոսին: Բայցեւայնպէս վարչապետ Պալմերստոնը՝ ելնելով քաղաքական իրավիճակից, «սառնություն» ցուցաբերեց Գարիբալդիի նկատմամբ: Եվ դա էր պատճառը, որ Ջուզեպպե Գարիբալդիին լինելով զգայուն անձնավորություն, վիրավորվեց կատարվածից եւ ցավով հեռացավ Մեծ Բրիտանիայի մայրաքաղաքից, ինչորլավ բան իր կողմից թողնելով այնտեղ:

Պարբերականը գրում է նաեւ, որ իտալական պառլամենտի մեջ առաջարկություն է եղել 150 հազար ֆրանկի վարձատրություն տրվի հերոսին: Եվ «Իարձյալ առաջարկվեցավ որ Իտալիոյ Առաջին Քաղաքացի փառավոր տիտղոսը տրվի հիշյալ մեծահամբավ զորապետին»<sup>14</sup>:

Նրա մասին լրագրում տպագրվել են այլ բնույթի հոդվածներ:

1865 թ. «Արշալոյս Արարատեանը» գրում է Իտալիայի Բրեշիա եւ Բիչենցա քաղաքներում տեղի ունեցած «անկարգությունների եւ խռովությունների» մասին, որոնք կազմակերպել էին «չարամիտ անձինք»՝ հասարակությանը գրգռելով կառավարության դեմ: Գնահատելով դրանց նպատակը՝ լրագիրը գտնում էր, որ ժողովրդի «մեծագոյն մասը» մասնակից չեղան դրան եւ խոհեմությամբ ընդունեցին այդ փաստը: Եվ շարունակում է զարգացնել միտքը. «միայն խառնիճաղանճ բազմամբոխ մարդիկ ու փողոցաշրջիկ տղայքը քարեր նետելով դեմ դրին ազգային պահապան զորաց, որոնք խռովարարաց խումբը ցրելու եկած էին»<sup>15</sup>:

Ովքե՞ր էին այդ շարամիտ մարդիկ, ի հարկե Գարիբալդիի կողմնակիցները, որոնք արմատականներ էին: «Չիավոր զորախումբը» ներողամիտ եղավ, այլապես Բրեշիայի փողոցներում շատ արյուն կթափվեր:

Լրագիրը զուսպ է Կավուրի՝ Սարդինո կառավարության վարչապետի գնահատման հարցում: Տարածայնություն է ծագել քաղաքական զանազան հարցերի շուրջը Կավուրի եւ Գարիբալդիի միջեւ: Միայն Վիկտոր-էմմանուելի

<sup>13</sup> Նույն տեղում, թիվ 627:

<sup>14</sup> Նույն տեղում, 1861, թիվ 646:

<sup>15</sup> Նույն տեղում, 1865, թիվ 762:

ազդեցություն շնորհիվ է, որ այս «երկու հռչակավոր մեծանուն անձերը» իրար հետ հաշտվեցին: Նրանք «Իտալիո ազգային շարժումին եւ ազգային ազատության հոգին են եւ որոց մեկուն կենցաղագիտական տաղանդին եւ միեւնոյն գինվորական քաջութիւնները վրա կըսքանչանա եվրոպան»<sup>16</sup>:

Լրագիրը համերաշխում էր տպագրված կարծիքների հետ:

Ղուկաս Պալդազարյանը հավասարության նշան էր դնում կոմս Կավուրի եւ Գարիբալդիի միջեւ: Այս հարցում խմբագիրն իրավացի չէր, քանի որ նրանք քաղաքական տարբեր ուղղությունների էին պատկանում: Ճշմարտացի է ամերիկացի պատմաբան Մարցիա Գավենպորտը, երբ նրանց հարաբերության մասին գրում էր. «Այս երկու մեծ մարդիկ, երբեք իսկապես չհասկացան ու չսիրեցին իրար: Կավուրը չէր կարողանում գնահատել Գարիբալդու անձնական հայրենասիրությունը: Իսկ Գարիբալդին չէր կարողանում հասկանալ եվրոպական դիվանագիտության այն լայնածավալ սարդոստայնը, որի միջոցով Կավուրը զարմանալի խելոքությամբ պետք է հյուսեր իր զգուշավոր ճանապարհը»<sup>17</sup>:

Վիկտոր-էմմանուելը միակ գործիչն է, որի նկատմամբ լրագիրը ընդգծված դրական կարծիք ունի: Լրագիրն ուրախությամբ արձանագրում է, որ «Եվրոպան ուշադրությունը գրեթե բոլորովին Իտալիոյ դեպքերուն վրա դարձած է, (Իտալիան-Հ.Ա.) յուր ազատությունը եւ անկախությունը ձեռք բերավ»<sup>18</sup>:

Եվ գովերգում է իտալական սահմանադրական թագավորական իշխանությունը, որի ներքո է գտնվում 22 միլիոն մարդ:

1870 թ. եվոպայում սկսված ֆրանս-պրուսական պատերազմը եւ Նապոլեոնյան կայսրության կործանումը հող նախապատրաստեցին Իտալիայի վերջնական միավորման համար: Նույն տարվա սեպտեմբերի 20-ին իտալական զորքերը Վիկտոր-էմմանուելի գլխավորությամբ, որի շարքերում կռվում էին Գարիբալդիի կամավորները՝ Նինո Բիքսիոյի հրամանատարությամբ, մտան Հռոմ եւ ազատագրեցին «հավիտենական քաղաքը»: Լրագրի կարծիով՝ «օրնապես վճռվեցավ այս մեծ դեպքը»՝ Հռոմը Իտալիայի մայրաքաղաք դառնալը անջնջելի տպավորություն թողեց խմբագիր Ղուկաս Պալդազարյանի վրա: Եվ ժամանակն է, որ իտալացիները «Յոստոսսափառ» թագավորի հետ միասին ամրապնդեն պետականությունը եւ օրինակ ծառայեն բախտակից ազգերի համար:

<sup>16</sup> Նույն տեղում:

<sup>17</sup> Garibaldi father of modern Italy, by Marcia Davenport, New-York, 1975, p. 171.

<sup>18</sup> «Առշալոյս Արարատեան», 1860, թիվ 633:

Ջ. Գարիբալդին, ինչպես ցույց է տալիս լրագիրը, համերաշխում է Վիկտոր-Էմմանուելի հետ, իսկ Իտալիո ժողովուրդը ողջունում է նրա կատարածը «կեցցե՛ Վիքթոր-Էմմանուել, կեցցե՛ Իտալիո միությունը»<sup>19</sup> խոսքերով:

Փաստական տեսակետից «Արշալույս Արարատեանում» տպագրված նյութերը շատ հետաքրքրական են եւ գալիս են լրացնելու Իտալիայի ազգային-ազատագրական շարժումների պատմության վերաբերյալ մութ մնացած էջերը:

---

<sup>19</sup> Նույն տեղում, 1871, թիվ 913: